



ՉԱՐ ՄԱՆՐԵՆԵՐԸ

- Մամա՛, պաղ է, կը մսիմ: Կոկորդս կը ցաւի, հաճիս վերմակ մըն ալ կը գոցե՞ս վրաս: Ու... կը դողամ:

- Պաղ առած ես երեւի,- կ'ըսէ մաման ու անմիջապէս շերմաչափը կը դնէ Աննային բերանը: Ձերմութիւնը 39 աստիճան էր: Մաման շուտով կը դիմէ բժիշկին:

Բժիշկը կու գայ, կը քննէ Աննան, լսափողը կը դնէ անոր կուրծքին, կռնակին, կը քննէ փորիկը, կոկորդը, ակռաները, ապա կ'ըսէ:

- Նշիկներդ բորբոքած են, Աննա՛: Պէտք է հանգիստ ընես, դեղերդ ճիշդ ժամերուն առնես, որ շուտով առողջանաս:

- Բայց ես ուշադիր եմ, տոքթօր: Երբ տունէն ելլեմ, գլխարկս կը դնեմ, վզնոց կը փաթթեմ, ինչպե՞ս կրնամ հիւանդանալ:

- Այսքանը չի բաւեր: Չհիւանդանալու համար պէտք է ուշադիր ըլլաս նաեւ, որ:

* Շատ տաք սենեակէ մը անմիջապէս պաղ օդին չելլես:

* Սենեակիդ օդը մաքուր պահես:
 * Քիթով շնչես եւ ոչ թէ բերնով:
 * Աղտոտ ձեռքերով աչքդ, քիթդ եւ բերանդ չշփես:
 * Մարդոցմով խճողուած տեղերէն հեռու մնաս: Նման տեղեր մանրէները աւելի շուտ կը փոխանցուին քեզի:

* Աղտոտ թաշկինակդ գրպանդ չպահես, այլ անմիջապէս թափես:

* Իսկ ամենէն կարելորը՝ լաւ ուտես, որովհետեւ երբ մարմինդ զօրաւոր ըլլայ՝ մանրէները կը վախնան մօտենալու քեզի:

- Ես չեմ սիրեր այդ չար մանրէները,- կ'ըսէ Աննա ու կը փաթթուի վերմակին: Մաման անմիջապէս կու տայ Աննային դեղերը, կը պատրաստէ մսաջուրով ապուրներ, պտուղի հիւթ եւ Աննան ինքզինք բաւական լաւ կը զգայ:

Երբ օր ետք դպրոց կ'երթայ ու ընկերներուն կը միանայ:



ԿԿՈՒԻՆ ԴԵՂԱԳԻՐԸ՝

Եթէ զգաս որ «պաղ առած ես».

* Գաղջ թէյին մէջ քամէ կիտրոնի հիւթ, աւելցո՛ւր դգալ մը շաքար եւ համով հոտով խմէ՛:


* Կիտրոնը, նարինջին նման, հարուստ է Սի կենսանիւթով: Ան շուտով կը սպանէ մանրէները:

* Չգո՛յ՛ջ, թէյը տաք չըլլայ, տաք ջուրը կը փճացնէ կենսանիւթը: Առողջութի՛ն:




ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇՏՅԱՆ-ՇԱՀԻՆԵՆԻՆ
 ՆԿԱՐԱԶԱՐՈՂԵՑ՝ ՈՒՅՅՈՒ ՔԵՇՈՇԵՆՆ


Իւրաքանչիւր պտուղէն ի՞նչ օշարակ կը ստանանք:
Միացո՛ւր:



Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը
նախասիրած գոյներովդ:



Փորձէ՛ գտնել ելքի ճամբան:



ՄԿՆԻԿԸ՝ ՈՐ ՏՈՒՆԵՆ ՓԱԽԱԿ

Մայր մուկը մեկ հատիկ գալակ ուներ: Փոքրիկ մկնիկը չէր ուզեր հնազանդիլ մայրիկին: Ան օր մը նեղուեցաւ ու տունէն փախաւ:

- Այլեւս ես հոս չեմ ուզեր ապրիլ: Ինձի պէտք չէ այս տունը,- գանգատեցաւ մկնիկը:

- Ես պիտի երթամ ու նոր տուն մը գտնեմ:

Գնա՛ց-գնա՛ց ու ճամբուն վրայ գեղեցիկ որջ մը տեսաւ: Ան մտածեց. «Ճիշդ այստեղ կրնամ ապրիլ»: Բայց դեռ չէր հասած ներս մտնելու, յանկարծ լսեց. «Ռռռռռ»: Գայլն էր, որ կ'ոռնար: Մկնիկը վախցած արագ-արագ որջէն հեռու փախաւ:

Ան շարունակեց իր ճամբան եւ ուրիշ գեղեցիկ տնակ մը տեսաւ: «Ժժժժ», կը լսուէր այնտեղէն: «Այստեղ մեղուներ կ'ապրին», - սարսափեցաւ մկնիկը ու կրկին փախաւ:

- Ծառին վրայ կ'ապրիմ,- որոշեց ան: Բայց հազիւ եւ բարձրացաւ ծառ, բուն այնտեղէն կանչեց՝ «Ու-ու-ու՛» եւ փորձեց ուտել զայն (իսկ դուք գիտէի՞ք, որ բուերը մուկեր կ'ուտեն):

Մկնիկը վազելով տուն վերադարձաւ, իր մայրիկին մօտ: Փաթթուեցաւ անոր ու ներողութիւն խնդրեց անկէ եւ խոստացաւ, որ այլեւս երբեք տունէն պիտի փախչի:





ԻՆՉՈ՞Ւ ԸՆՁՈՒՂՏԻՆ ԼԵՉՈՒՆ ԿԱՊՈՅՏ Է

Ընծուղտին լեզուն կապոյտ կ'երեւի, որովհետեւ անոր մորթին տակ շատ մուգ գոյնով նիւթեր կան: Ընծուղտը իր լեզուն կը գործածէ ուտելիքը առնելու համար. ան յաճախ լեզուն դուրս կը հանէ: Յետեւաբար, մասնագետներ գուշակած են, թէ այդ մուգ գոյնը գայն արեւուն ճառագայթներէն կը պաշտպանէ:

ԱՐԴԵՕ՞Ք ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԱԼ ԿԼԹԻԿ Կ՝ՈՒՆԵՆԱՆ

Կլթիկը կը յառաջանայ կուրծքին եւ որովայնին միջեւ գետեղուած մկանին կծկումներէն: Այս մկանը ունեցող անասունները միայն կրնան կլթիկ ունենալ, այսինքն՝ ստնաւորները:

ԳԱՂԹՈՂ ԱՂԱԲՆԻՆ ՔԱՆԻ՞ ՔԻԼՈՄԵԹՐ ԿՐՆԱՅ ԿՏՐԵԼ

Աղանին իսկական մարզիկ մըն է: Մէկ օրուան ընթացքին ան կրնայ կտրել մինչեւ 1000 քիլոմէթր: Ան իր ուղղութիւնը եւ դիրքը կը ճշդէ ըստ արեւուն եւ երկրային մագնիսական շրջաններուն: